

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՍԵՐՎԻՍ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԻԶԵՎԱՆ – 2013

ՄԵՐՎԻՍ

Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	«Սերվիս» մասնագիտություն 100100
2. Բուհը	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	
4. Շնորհվող որակավորումը	Բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2012-2013
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա և հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի պատրաստել սերվիսի գծով մասնագետներ տնտեսության տարբեր ոլորտների համար, որոնք ունակ կլինեն

- Մշակելու սերվիսի ոլորտի և զբոսաշրջության զարգացման, կազմակերպման սկզբունքներ և ռազմավարական ծրագրեր
- Իրականացնելու պրակտիկ մասնագիտական գործունեություն սերվիսի և զբոսաշրջության ոլորտներում,
- Իրենց տեսական գիտելիքներով և գործնական կարողություններով ու հմտություններով բավարարելու սերվիսի ոլորտի զարգացման արդի միտումներին և պահանջներին

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները	
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա. Ա1. Վերլուծել և գնահատել տրնտեսության կառուցվածքում և զարգացման գործընթացում սերվիսի տեղն ու դերը, Ա2. Տիրապետել սպասարկման ոլորտի կազմակերպման սկզբունքներին, Ա3. Բացահայտել սերվիսի ոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային մակարդակում, Ա4. Մշակել սոցիալ-մշակույթային ծառայությունների և զբոսաշրջության կազմակերպման ծրագրեր, Ա5. Հավաքել, վերլուծել և համակարգել սոցիալ-մշակույթային ծառայության և զբոսաշրջության ոլորտին տեղեկատվությունը, Ա6. Գնահատել սերվիսի ոլորտի ենթակառուցվածքները, Ա7. Նախագծել սոցիալ-մշակույթային ծառայության նոր ենթակառուցվածքներ, Ա8. Մշակել սերվիսի տարածքային կազմակերպման կատարելագործման և զարգացման հիմանական ուղղությունները:	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա8 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով. Ա1 - Ա3. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ համացանցում առկա նպատակային նյութեր, ▪ առաջադրանքներ ու նախագծեր. Ա4- Ա6. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ տարբեր հարցադրումներ և քննարկումներ, ▪ խմբային նախագծեր, ▪ պրակտիկ ծանոթացում, ▪ առաջադրանքներ և նախագծեր, ▪ համացանցում առկա նպատակային նյութեր. Ա7,Ա8. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ առաջադրանքներ և նախագծեր, ▪ գիտական սեմինար, ▪ արտադրական պրակտիկա: Գնահատման մեթոդները Ուսանողների Ա1-Ա8 գիտելիքներ-

	ըը և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով. Ա1, Ա5. - առաջադրանքներ, - ստուգարքներ և քննություններ, - առաջադրանքներ, - կուրսային աշխատանքներ. Ա2-Ա4. - առաջադրանքներ, - ուսումնական նախագծեր, - ստուգարքներ և քննություններ. Ա6.- Ա8 - ուսումնական նախագծեր և քննություններ, - խմբային նախագծեր, - ավարտական աշխատանքի պաշտպանություն:
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. Գործնականում իրականացնելու մարքեթինգային և մենեջերական գործունեություն՝ սոցիալ-մշակութային ծառայությունների ոլորտում, Բ2. Վերլուծելու զբոսաշրջության զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը, Բ3. Գնահատելու սոցիալ-մշակութային ծառայությունների և զբոսաշրջության զարգաց-	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ7 կարողությունները հետևյալ մեթոդներով. Բ1, Բ 7, Բ5. - ուսումնական նախագծեր, - դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, - համացանցում առկա նյութեր - առաջադրանքներ. Բ2, Բ3. - առաջադրանքներ, - ուսումնական և արտադրական պրակտիկա,

ման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը, նշանակությունը, Բ4. Տարբերակելու սպասարկման ոլորտի ուսումնասիրությունների առանձին մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն), Բ5. Կանխատեսելու սոցիալ-մշակութային ծառայությունների առանձին տեսակների զարգացման և տարածքային տեղաբաշխման հեռանկարային գործընթացները, Բ6. Ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և սոցիալ-մշակութային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա, Բ7. Դրսևորելու աշխատանքի բարձր արդյունավետություն և կազմակերպչական որակներ:	▪ համացանցում առկա նյութեր ▪ առաջադրանքներ. Բ4. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ համացանցում առկա նյութեր, ▪ գիտական սեմինար. ▪ Առաջադրանքներ. Բ6. ▪ խմբային նախագծեր, ▪ ուսումնական պրակտիկա: Գնահատման մեթոդները Ուսանողների Բ1-Բ7 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով Բ1, Բ4, ▪ ուսումնական նախագծեր, ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն. Բ2,Բ3. ▪ առաջադրանքներ, ▪ ուսումնական նախագծեր. Բ5,Բ6,Բ 7 ▪ խմբային նախագծեր, ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն:
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ1. Արդյունավետ կերպով օգտվելու տեղեկատվության տա-	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով. Գ1.

րատեսակ աղբյուրներից՝ մայրենի և օտար լեզուներով, Գ2. Փաստերի վերլուծության հիման վրա եզրահանգումներ և ընդհանրացումներ անելու, Գ3. Ռացիոնալ կերպով պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները, Գ4. Դրսևորելու քննադատական մտածողություն, Գ5. Աշխատելու թիմում, Գ6. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, Գ7. Պահպանելու մասնագիտական էթիկայի կանոնները:	▪ դասախոսություններ և սեմինար ▪ պարապմունքներ բանավոր ներկայացումներ, ▪ գիտական սեմինար. Գ2. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինար, ▪ կուրսային աշխատանքներ, ▪ ուսումնական պրակտիկա. ▪ հետազոտական և վերլուծական աշխատանք, Գ3. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինար, ▪ հետազոտական և վերլուծական աշխատանք, Գ4. ▪ Ուսումնական և արտադրական պրակտիկա, ▪ վերլուծական աշխատանք, ▪ ավարտական աշխատանքի պատրաստում Գ5.- Գ7 ▪ դասախոսություններ, ▪ գործնական սեմինար, ▪ ուսումնական և արտադրական պրակտիկա, ▪ Ավարտական աշխատանքի պատրաստում Գնահատման մեթոդները Ուսանողների Գ1-Գ7 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Գ1-Գ7. ▪ զեկուցումներ,
---	--

	▪ գրավոր հաշվետվություններ, ▪ Ավարտական աշխատանքի պաշտպանություն:
--	--

11. Ծրագրի կառուցվածքը
11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը
Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (28 կրեդիտ աշխատաձևավորվ), մաթեմատիկական և բնագիտական, (10 կրեդիտ աշխատաձևավորվ) ընդհանուր մասնագիտական (130 կրեդիտ աշխատաձևավորվ) ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (32 կրեդիտ աշխատաձևավորվ): <i>Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական</i> <i>Պարտադիր դասընթացներ (28 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը: <i>Գամբնտրական դասընթացներ (4 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը: <i>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</i> <i>Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը <i>Գամբնտրական դասընթացներ (2 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը: <i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս (170 կրեդիտ)</i> Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը (146 կրեդիտ):

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսվում է նաև 2-ական կրեդիտ աշխատաձևավաղվ 2 կուրսային աշխատանքների կատարում (4 կրեդիտ):

Կրթական այլ մոդուլներ

Ուսումնական պրակտիկա – (8 կրեդիտ)

Ապահովում է մասնագիտական ոլորտի կիրառական հիմնախընդիրների ընկալումը. կարող է իրականացվել երթուղիների ձևով ՀՀ տարածքում, Հանքավանի հենակետային ուսումնական բազայում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության տուրիզմի և զբոսաշրջության վարչությունում և ՀՀ սպասարման ոլորտի պատկան ձեռնարկություններում:

Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)

Գործնական աշխատանք է, որի նպատակն է բակալավրերի մոտ զարգացնելու գործնական հմտություններ, աշխատանքային պլանով աշխատելու կառուցվածություններ և այլն:

Ամփոփիչ մասնագիտական քննություն (4 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ստուգել բակալավրիատում կրթական մոդուլներից ստացված ընդհանուր գիտելիքները:

Ավարտական աշխատանքի պաշտպանություն (12կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփի հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:

11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

1-ին ուստարի

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
ՀՍՏ պարտադիր դասընթացներ • 0302/B01. Հայոց լեզու և գրականություն-1 (2 կրեդիտ) • 0302B02. Հայոց լեզու և գրականություն-2 (2 կրեդիտ)	ՄԲ կամընտրական դասընթացներ • 0101/B01. Մաթեմատիկայի հիմունքներ (2 կրեդիտ) կամ	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

• 0305/B01. Ռուսաց լեզու-1 (4 կրեդիտ) • 0305/B02. Ռուսաց լեզու-2 (4 կրեդիտ) • 0301/B01. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ) • 0301/B02. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2կրեդիտ) • 0001/B01. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) ՄԲ պարտադիր դասընթացներ • 0101/B01. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ) • 0103/B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական դասընթացներ • 0202/B01. Տնտեսական և սոցիալական աշխարհագրություն (4 կրեդիտ) • 0202/B02. Սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության ներածություն (3 կրեդիտ) • 0202/B03. Ընդհանուր երկրագիտություն (3 կրեդիտ) • 0202/B04. Հայ ազգագրություն (2 կրեդիտ) • 0202/B05. Տուրիստական	• 0102/B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական դասընթացներ • 0305/ B84. Անգլերեն-1 (6 կրեդիտ) կամ • 0305/ B70. Ֆրանսերեն-1 (6 կրեդիտ) • 0305/ B85. Անգլերեն - 2 /երկրագրության հիմունքներով/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B71. Ֆրանսերեն - 2 /երկրագրության հիմունքներով/ (6 կրեդիտ)	
---	--	--

երկրագրություն (4 կրե- դիտ) • 0202/B06. Մերվիսի հի- մունքներ (4 կրեդիտ) • 0202/B07. Մերվիսի աշ- խարհագրություն (2 կրե- դիտ) Այլ կրթական մոդուլներ • Ուսումնական պրակտի- կա (4 կրեդիտ)		
<i>2-րդ ուս տարի</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
ՀՄՍ (Ռուսաց լեզու-3 կամ Օտար լեզու-3) (4 կրեդիտ) պարտադիր դասընթացներ • 0305/B09. ռուսաց լեզու-3 (4 կրեդիտ) • 0301/B01. Փիլիսոփայույթ- յան հիմունքներ (4 կրե- դիտ) • 0001/B01. Ֆիզդաստիա- րակություն (0 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտա- կան դասընթացներ • 0202/B08 Տուրիզմի հի- մունքներ (5 կրեդիտ) • 0202/B09 Հայաստանի պատմական աշխարհագ- րություն (5 կրեդիտ) • 0301/B10 Հայ եկեղեցու պատմություն (2 կրեդիտ) • 0201/B11 Տնտեսագիտությո- ւն (3 կրեդիտ)	ՀՄՍ կամընտրա- կան դասընթաց- ներ • 0202/B01. Մշա- կութաբանու- թյուն (2 կրեդիտ) • 0301/B01. Կրոն- ների պատմու- թյուն (2 կրեդիտ) • 0301/B01. Քաղա- քագիտություն (2 կրեդիտ) • 0301/B01. Իրա- վագիտություն (2 կրեդիտ) Ընդհանուր մաս- նագիտական դա- սընթացներ • 0305/ B86. Անգ- լերեն – 3 /երկ- րագրության հի-	Առնվազն 60 կրե- դիտի կուտա- կում:

• 0202/B12. Բնակչության աշխարհագրություն ազգագրության հիմունքներով (4 կրեդիտ) • 0202/B13. Արտասահմանյան երկրների տնտեսական աշխարհագրություն (6 կրեդիտ) • 0202/ B14. Բժշկական աշխարհագրություն(5 կրեդիտ) • 0202/B15. Զբոսաշրջության սոցիոլոգիա (4 կրեդիտ) Այլ կրթական մոդուլներ • Ուսումնական պրակտիկա (4 կրեդիտ)	մունքներով (4 կրեդիտ)Կամ • 0305/ B72. Ֆրանսերեն-3 /երկրագրության հիմունքներով (4 կրեդիտ) • 0305/ B87. Անգլերեն-4 (6 կրեդիտ) կամ • 0305/ B73. Ֆրանսերեն 4 (6 կրեդիտ) կամ • 0305/ B91. ռուսերեն) 4 (6 կրեդիտ)	
---	---	--

11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>3-րդ ուս. տարի</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ • 0202/B16. Տուրիստագիտություն (4 կրեդիտ) • 0202/B17. Հայ արվեստ և ճարտարապետություն (3 կրեդիտ) • 0202/B18. Հայաստանի աշխարհագրություն (7 կրեդիտ) • 0202/B19. Մարքեթինգը	ԸՄԲ կամրնտրական դասընթացներ • 0001/B01. Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ) • 0001/B02. Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (2	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

ն գովազդը սերվիսի ու լրրոտում (5կրեդիտ) • 0202/B20. Մերվիսի համակարգի էթիկետ (4կրեդիտ) • 0202/B21. Մերվիսի մենեջմենթ(5կրեդիտ) • 0202/B22. Հայկական սփյուռքի աշխարհագրություն (5կրեդիտ) • 0202/B23. Միջազգային զբոսաշրջություն (5կրեդիտ) Այլ կրթական մոդուլներ • Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) • Արտադրական պրակտիկա (4կրեդիտ)	կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական դասընթացներ • 0305/ B74. 2- րդ Օտար լեզու- 1/Անգլերեն/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B88. 2- րդ Օտար լեզու-1 /Ֆրանսերեն/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B92. 2- րդ Օտար լեզու-1 /ռուսերեն/ (6 կրեդիտ) • 0305/ B75. 2-րդ Օտար լեզու- 2 /Անգլերեն երկրագրության հիմունքներով/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B89. 2-րդ Օտար լեզու- 2 /Ֆրանսերեն երկրագրության հիմունքներով/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B93. 2-րդ Օտար լեզու- 2 /ռուսերեն երկրագրության հիմունքներով / (6 կրեդիտ)	
--	---	--

4-րդ ուստարի		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ • 0202/B24. Հյուրասիրության ինդուստրիա (5 կրեդիտ) • 0202/B25. Ռեկրեացիոն աշխարհագրություն (6 կրեդիտ) • 0203/B26. Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը սերվիսում (5 կրեդիտ) • 0202/B27. Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ (6 կրեդիտ) • 0202/B28. Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձաններ (5 կրեդիտ) • 0103/B29. Գեոէկոլոգիա (5 կրեդիտ) • 0202/B30. Մերվիսի հոգեբանություն (4 կրեդիտ) Այլ կրթական մոդուլներ • Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) • Ավարտական աշխատանք (12 կրեդիտ) • Ամփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ)	Ընդհանուր մասնագիտական դասընթացներ • 0305/ B76. 2-րդ Օտար լեզու- 3 /Անգլերեն/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B90. 2-րդ Օտար լեզու- 3 /Ֆրանսերեն/ (6 կրեդիտ) կամ • 0305/ B94. 2-րդ Օտար լեզու- 3 /ռուսերեն/ (6 կրեդիտ)	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ

Տե՛ս «ԵՂՀ ԻՄ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղե-
ցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2011 թ., էջ 14-20:

14. Ապագա կարիերայի հնարավորությունները

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել հե-
տևյալ ոլորտներում՝

- ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում
- ՀՀ սփյուռքի նախարարությունում
- ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունում
- Հասարակական առևտրի, սննդի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում
- Ներքին, ներգնա և արտագնա զբոսաշրջության ձեռնարկու-
թյուններում
- Գովազդային գործակալություններում
- Հյուրանոցներում և այցելուների տեղաբաշխման այլ հաստա-
տություններում
- Միջազգային օդանավակայաններում և երկաթուղային կայա-
րաններում

և զբաղեցնել հետևյալ պաշտոնները.

- Սպասարկման և զբոսաշրջության ոլորտներում զարգացման
ռազմավարական քաղաքականության և ծրագրերի նախագ-
ծող,
- Սպասարկման և զբոսաշրջության ոլորտներում զարգացման
ռազմավարական քաղաքականության և ծրագրերի իրագոր-
ծող- կազմակերպող խորհրդատու-մասնագետ
- Հյուրընկալության, հասարակական առևտրի, սննդի և սպա-
սարկման ոլորտի ձեռնարկություններում՝ գործադիր տնօ-
րեն,
- Հյուրընկալության, հասարակական առևտրի, սննդի և սպա-
սարկման ոլորտի ձեռնարկություններում՝ մենեջերներ,
- Գովազդային գործակալներ,

- Զբոսաշրջային ծառայությունների և փաթեթների մշակողներ և կազմակերպիչներ,
- Զբոսավարներ և էքսկուրսավարներ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ և հարակից այլ բուհերի մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (երե կան)

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- գրականության էլեկտրոնային ռեսուրսներ:
- սպասարկման ոլորտում ակտիվ գործունեություն ծավալած ընկերությունները, հյուրանոցները, գովազդային ընկերությունները:

16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը

Բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչ «Մերվիս» մասնագիտությամբ,

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

- Տազանողգի տեխնոլոգիական ինստիտուտի բակալավրի ծրագիր, 2002-2003թթ.
- Տուրիզմի և սերվիսի ռուսաստանյան պետական համալսարան, բակալավրի ծրագիր, 2002-2003թթ
- Երևանի Սլավոնական Համալսարանի բակալավրի ծրագիր, 2005-2006թթ
- Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարան, 2007թ.
- ԱՄՆ, Ռոչեստերի տեխնոլոգիական ինստիտուտի բակալավրի ծրագիր. 2008-2009թթ
- ԱՄՆ, Դելվերի պետական համալսարան, “Հյուրընկալության և տուրիզմի կառավարման” բակալավրի ծրագիր 2010-2011թթ.

18. Լրացուցիչ տեղեկատվություն

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետը և ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հետ միակն են ՀՀ-ում գոր-

ծող պետական և ոչ պետական բուհերի շրջանակում, որը սկսած 2007թ-ից. համաձայն կառավարության որոշման, ինչպես նաև ԵՊՀ-ի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատվերով մասնագիտացված է «Մերվիս» մասնագիտությամբ բարձրագույն որակավորում ունեցող կադրերի պատրաստմամբ:

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ դասընթացների տեղեկագրքում:

«Սերվիս» ծրագրի ուսումնական պլանի քարտեզը

Այս բաժինը կապ է հաստատում ծրագրի կրթական վերջնարդյունքների և այն կրթական մոդուլների միջև, որտեղ դրանք ձևավորվում և գնահատվում են և սահմանում է այն ուստարին, որի ավարտին ծրագրի կրթական վերջնարդյունքները պետք է ձեռք բերվեն բոլոր ուսանողների կողմից:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
Ա1	Գիտելիք տնտեսության կառուցվածքի և զարգացման գործընթացում սերվիսի տեղի ու դերի մասին	Գ1	Տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից՝ մայրենի և օտար լեզուներով օգտվելու կարողություններ
Ա2	Սպասարկման ոլորտի կազմակերպման սկզբունքներին իմացություն	Գ2	Փաստերի վերլուծության հիման վրա եզրահանգումներ և ընդհանրացումներ անելու հմտություններ,
Ա3	Իմացություն տարածաշրջանային մակարդակում սերվիսի ոլորտի կառուցվածքային առանձնահատկությունների և զարգացումների մասին	Գ3	Ժամանակը ու այլ ռեսուրսները ռացիոնալ կերպով պլանավորել ու կարողություններ,
Ա4	Մոցիալ-մշակութային ծառայությունների և գրոսաշրջության կազմակերպման ծրագրերի կիրառության առանձնահատկությունների վե-	Գ4	Քննադատական մտածողություն դրսևորելու կարողություններ

	բաբերյալ հիմնարար գիտելիք		
Ա5	Իմացություն սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության ոլորտի տեղեկատվության մասին,	Գ5	Թիմում աշխատելու կարողություն
Ա6	Աերվիսի ոլորտի ենթակառուցվածքների իմացություն և ճանաչողություն	Գ6	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ բանավոր և գրավոր խոսքը կառուցելու կարողություններ,
Ա7	Գիտելիք սոցիալ-մշակութային ծառայության նոր ենթակառուցվածքների մասին	Գ7	Մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու կարողություններ:
Ա8	Իմացություն սերվիսի տարածքային կազմակերպման կատարելագործման և զարգացման հիմնական ուղղությունների մասին		
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ		Բ1	սոցիալ-մշակութային ծառայությունների ոլորտում մարքեթինգային և մենեջերական գործունեություն կիրառելու կարողություն
Բ2	Զբոսաշրջության զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը վերլուծելու ունակություն	Բ5	Սոցիալ-մշակութային ծառայությունների առանձին տեսակների զարգացման և տարածքային տեղաբաշխման հեռանկարային գործընթացները կանխատեսելու ունակություն
Բ3	Գնահատել սոցիալ-մշակութային ծառայությունների և զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքները,	Բ6.	Հյուրընկալության կազմակերպման և սոցիալ-մշակութային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտու-

[illegible]

Մաթեմատիկայի հիմունքներ	0101																					
Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ	0102	X																		X		X
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ																						
Տնտեսական և սոցիալական աշխարհագրություն	0202	X								X							X					
Սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության ներածություն	0202				X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Հայ ազգագրություն	0202					X		X				X										X
Ընդհանուր երկրագիտություն	0202		X										X									X
Մերվիսի հիմունքներ	0202		X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Մերվիսի աշխարհագրություն	0202		X	X									X									X
Տուրիստական երկրագրություն	0202	X		X						X	X											X
Հայաստանի պատմական աշխարհագրություն	0202			X								X										X
Հայ եկեղեցու պատմություն	0202				X							X										
Տնտեսագիտություն	0202	X			X				X							X				X		
Տուրիզմի հիմունքներ	0202				X					X						X				X		

Զբոսաշրջության սոցիո-լոգիա	0202				X						X	X							X		
Բնակչության աշխարհագրություն ազգագրության հիմունքներով	0202				X									X							
Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն	0202	X			X																
Մարդու և շրջակա միջավայրի էկոլոգիա	0202				X														X		
Հայ արվեստ և ճարտարապետություն	0202				X						X										
Զբոսաշրջության և հյուրանոցային սերվիսի մշակույթ	0202		X		X									X	X			X	X		X
Մարքեթինգը և գովազդը սերվիսի ոլորտում	0202		X		X			X						X			X	X	X		X
Տուրիստագիտություն	0202				X					X	X			X							
Հայաստանի աշխարհագրություն	0202	X			X																
Սերվիսի մենեջմենթ	0202		X		X				X					X					X		
Հայկական սփյուռքի աշխարհագրություն	0202				X					X				X							X
Միջազգային զբոսաշրջություն	0202		X		X									X					X	X	X

Ռեկրեացիոն աշխարհագրություն	0202				X					X	X			X			X		X	X	X
Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը սերվիսում	0202				X	X									X						X
Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ	0202		X		X					X				X	X			X		X	X
Հյուրասիրության ինդուստրիա	0202		X		X									X				X		X	X
Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձաններ	0202				X						X										
Նորարարությունը զբոսաշրջության և սերվիսի մեջ	0202				X	X										X					
Տուրիզմի տարատեսակներ	0902		X		X									X	X			X			X
Կամրնտրական առարկաներ																					
Օտար լեզու	0305/0305				X															X	X
2-րդ օտար լեզու	0305/0305/0305				X															X	X
Օտար լեզու երկրագրության հիմունքներով	0305/0305/0305				X															X	
2-րդ օտար լեզու երկրագրության հիմունքներով	0305/0305/0305				X															X	
ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՍՈՂՈՒԼՆԵՐ																					
Ուսումնական պրակտիկա	0000		X		X										X	X	X	X	X	X	X

Ուսումնական պրակտի- կա	0000		X		X										X	X	X	X	X	X	X	X
Կուրսային աշխատանք	0000				X											X	X					X
Արտադրական պրակտի- կա	0000		X		X										X	X	X	X	X	X	X	X
Ավարտական աշխա- տանք	0000				X										X	X	X	X	X	X	X	X
Ավարտական ամփոփող քննություն	0000				X										X	X	X	X	X	X	X	X

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՄԸՆԹԱՑՆԵՐ

0302/B01	Հայոց լեզու և գրականություն - 1	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության համակարգերի ուսուցումը նպատակաուղղել խոսքի մշակույթի զարգացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների ամրակայմանը:		
<i>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • կլիմանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները. • ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • ճիշտ գործածել մասնագիտական բառապաշարը, տերմինաբանությունը, • գործնականում կիրառել լեզվաոճական հնարարներ: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • կկարողանա գրական հայերենով շարադրել մտքերը:		
<i>Համառոտ բովանդակությունը</i> Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Հայ հին գրականություն: Հնչյունաբանություն: <i>Հայերենի</i> հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: Բառագիտություն: Ստուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: Ոճերի դասակարգումը: Հայ միջնադարյան գրականություն:		
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:		
<i>Հիմնական գրականության ցանկը</i>		

1. Բադիկյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., 2010թ.:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2004թ.:
3. Սարգսյան Ա., Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007թ.:
4. Աղաջանյան Զ., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2009թ.:

0302/B02	Հայոց լեզու և գրականություն - 2	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
2-րդ կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:		
<i>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները. • ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • ճիշտ գործածել քերականական ձևերը • գործնականում կիրառել ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարներ ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ, • կկարողանա կատարել քննական վերլուծություններ:		
<i>Համառոտ բովանդակությունը</i> Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի		

և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը: Գնահատման մեթոդները և չափանիշները Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք: Հիմնական գրականության ցանկը 1. Բաղիկյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., 2010թ., 2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2004թ., 3. Սարգսյան Ա., Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007թ., 4. Աղաջանյան Զ., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2009թ.:

0305/B07	Ռուսաց լեզու-1	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
1 կիսամյակ	Ստուգաք	
Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ լեզվական տարբեր ոլորտներում հաղորդակցվելու համար: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը. <i>Գիտելիք և իմացություն</i> • ռուսաց լեզվի քերականական կառուցվածքի տիրապետում: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • գրագիտորեն կազմելու իր բանավոր խոսքը: ✓ (ընդհանրական կարողություններ) • մասնակցելու տարաբնույթ երկխոսությունների: Համառոտ բովանդակությունը Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հնչյունաբանություն. ձայնավոր-		

ների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Բառագիտություն. պատկերացում բառի-մաստի մասին. մենիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգաբքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Լ.Մ. Մկրտչյան, ՌԻսումնական ձեռնարկ, Երևան, 2003թ.:

0305/B08	Ռուսաց լեզու-2	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
2 կիսամյակ	Ստուգաբք	
Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ լեզվական տարբեր ոլորտներում հաղորդակցվելու համար:		
<i>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական կանոնների վերաբերյալ, • մասնագիտական լեզվի տերմինաբանության ոլորտի վերաբերյալ: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • կատարելու մասնագիտական տեքստի շարահյուսական վերլուծություն՝ ելնելով այդ տեքստերին բնորոշ շարահյուսական կառույցների առանձնահատկություններից,		

• վերլուծելու և վերարտադրելու մասնագիտական տեքստը: ✓ (ընդհանրական կարողություններ) • կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն:
Համառոտ բովանդակությունը Բառագիտություն. դարձվածքներ և դարձվածքների դասակարգումը: Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:
Հիմնական գրականության ցանկը 1. Լ.Մ. Մկրտչյան, ՌԻ-սումնական ձեռնարկ, Երևան, 2003թ. 2. Է.Ս. Վարդումյան, Ռուսաց լեզվի ձեռնարկ տնտեսագիտական բուհի համար, Եր., 2010թ.

0305/B09	Ռուսաց լեզու-3	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
3 կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվական հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվի ունակությունները, ինչպես նաև մասնագիտական գրականությունից ազատ օգտվելու կարողություն:		
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը. <i>Գիտելիք և իմացություն</i> • ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգին: <i>Ունակ կլինի</i>		

✓ (բուն մասնագիտական կարողություններ) - մեկնաբանելու և վերարտադրելու մասնագիտական տեքստեր, - ինքնուրույն կազմելու կապակցված տեքստ մասնագիտական թեմայով: ✓ (ընդհանրական կարողություններ) - կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով, - կկարողանա թարգմանել տարբեր բարդության մասնագիտական տեքստեր:	
Համառոտ բովանդակությունը Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ. Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ:	
Գնահատման մեթոդները և չափանիշները Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:	
Հիմնական գրականության ցանկը 1. Է. Ս. Վարդույան, Ռուսաց լեզվի ձեռնարկ տնտեսագիտական բուհի համար, Եր., 2012թ.	

0301/B01	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2 կրեդիտ
2 ժամ	24/0/8	
1 կիսամյակ	Մտուգարք	
Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա		

հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման վրա:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> • հայոց պատմության զարգացման օրինաչափությունների և ամբողջական պատմության հիմնախնդիրների մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • վերլուծելու հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, • տարբերակելու հայոց պատմության առանձնահատկությունները զարգացման տարբեր փուլերում ✓ (ընդհանրական կարողություններ) • կկարողանա ստացած գիտելիքները լայնորեն օգտագործել իր աշխարհայացքային, հատկապես կրթական գործընթացներում:
Համատոտ բովանդակությունը <i>Ներածություն.</i> Հայկական բնաշխարհը: Վարչական բաժանումները: Հայաստանը հնագույն շրջանում: Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VI դդ.): Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-V դդ.): Հայաստանը վաղ միջնադարում: Հայաստանը զարգացած միջնադարում: Հայաստանը ուշ միջնադարում:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
Հիմնական գրականության ցանկը 1. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը/, Երևան, 2008: 2. Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան, 2000: 3. Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն /սկզբից մինչև 18-րդ դ. Վերջ/, Երևան, 1975:

0301/B02	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2 կրեդիտ
2 ժամ	24/0/8	
2 կիսամյակ	Քննություն	
Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունների պատմության վերլուծության վրա:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> • հայոց պատմության զարգացման օրինաչափությունների և ամբողջական պատմության հիմնախնդիրների մասին, • Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմության մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • տարբերակելու հայոց պետականությունների պատմությունը, • վերլուծելու հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, • տարբերակելու հայոց պատմության առանձնահատկությունները զարգացման տարբեր փուլերում, ✓ (ընդհանրական կարողություններ) • կկարողանա ստացած գիտելիքները լայնորեն օգտագործել իր աշխարհայացքային, հատկապես կրթական գործընթացներում:		
Համառոտ բովանդակությունը Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հայկական հարցի ծագումը և բովանդակությունը: Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ական թթ.-20-րդ դ. սկիզբ): Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: 1917թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը: 1917թ հոկտեմբերյան Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): Հայաստա-		

նի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): Լեոնային Ղարաբաղի հանրապետությունը:
Գնահատման մեթոդները և չափանիշները Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է երեք հարցից:
Հիմնական գրականության ցանկը 1. Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան, 2000թ. 2. Հայոց պատմություն, Երևան, 2012թ.

0301/B05	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
4 ժամ	48/0/16	
3 կիսամյակ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> - փիլիսոփայության հարցերի մասին, - այդ հարցերի մասին կկազմի ընդհանուր պատկերացումներ: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - հասկանալու տարբեր երևույթների իմաստը, - բացատրելու տարբեր երևույթների իմաստը: ✓ (ընդհանրական կարողություններ) - դրսևորել զարգացած աշխարհայացք:		
Համառոտ բովանդակությունը Փիլիսոփայության առարկան: Կեցություն և մատերիա: Դիալեկտիկա: Բնություն: Մարդ և պրակտիկա: Գիտակցություն և ճանաչողություն: Գիտություն: Հասարակություն: Մշակույթ: Անձ: Ապագա:		
Գնահատման մեթոդները և չափանիշները Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է		

4 հարց:
Հիմնական գրականության ցանկը 1. Կյուրեղյան Է.Ա., Փիլիսոփայություն, Երևան, 2004թ. 2. Բրուստյան Գ. Ա., Իմաստասիրական երկխոսություններ, Հ.-1, Հ.-2, Երևան, 1985 – 1987թ 3. Գաբրիելյան Հ. Գ., Հայ փիլիսոփայական պատմություն, Երևան, 1976թ.

0301/B03	Քաղաքագիտություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
3 կիսամյակ	Ստուգաթղթ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին, • քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • քաղաքագիտական վերլուծություններ կատարելու, ✓ (ընդհանրական կարողություններ) • կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:		
Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Ընտ-		

րություններ և ընտրական համակարգեր: Քաղաքական գաղափարա-
խոսություններ: Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա
դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:

Քնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին
տրվում է 4 հարց դաընթացի բովանդակությունից, որոնց բավարար
պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Հիմնական գրականության ցանկը

1. Մանուչարյան Հ., Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմութ-
յուն, Երևան, 2002:
2. Քաղաքագիտության ներածություն, Երևան, 1996 :
3. Քաղաքագիտություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
4. Алмонд Г., Пауэлл Д., Сравнительная политология сегодня, М.,
2003г.

0301/B04	Իրավագիտություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
3 կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է սովորեցնել հասարակական կյանքի տար- բեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպա- տակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշ- խարհայացքի ու մշակույթի ձևավորումը:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i>		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքների, հայեցակարգերի մասին, • օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավոր- ման հիմունքները:		
<i>Ունակ կլինի.</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
• կիրառելու կարևոր իրավական հասկացությունները, եզրույթ- ները,		
✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		
• գործնականում կիրառելու ձեռք բերված ունակությունները և հմտությունները:		

Հասարակություն և պետություն: Իրավունք: Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: Իրավունքի ձևերը: Իրավունքի համակարգը: Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: Սահմանադրական իրավունք: Դատական իշխանություն և դատական համակարգ: Քաղաքացիական իրավունք: Աշխատանքային իրավունք: Ընտանեկան իրավունք: Էկոլոգիական իրավունք: Քրեական իրավունք: Դատավարական իրավունք: Միջազգային իրավունք:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամադրված հարցաշարից), որոնցից առնվազն 2-ին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

Հիմնական գրականության ցանկը

1. ՀՀ քրեական իրավունք. ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, խմբ.Գ. Ղազինյան, Եր., Երևանի համալս. հրատ., 2007:
2. ՀՀ քրեական դատավարություն. ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, հեղ.խմբի ղեկավար և խմբագիր ի.գ.դ.Գ. Ղազինյան, Եր., Երևանի համալս. հրատ., 2006:
3. ՀՀ սահմանադրական իրավունք, Այվազյան Ն. և ուրիշներ, Եր., Երևանի համալս. հրատ., 2008:
4. ՀՀ քաղաքացիական իրավունք, Բարսեղյան Ս. Կ., Մաս 1, դասագիրք բուհերի համար, Երևանի համալս. հրատ., 2006:

0202/B01	Մշակութաբանություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
4 կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և մշակույթ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i>		

• գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին: <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • կիրառելու մշակույթի բաղադրիչները, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • օգտագործելու ընդհանուր գիտելիքները համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:		
Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները՝ մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:		
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:		
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Գուրնիչ Պ. Ս., Մշակութաբանություն, Երևան, 2002 : 2. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2001: 3. Актуальные проблемы культуры 20-ого в., М., 2002.		

0301/B06	Կրթության պատմություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
4 կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրթության, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական		

եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դեմոփինացիաների վերաբերյալ:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> - կրոնի, աշխարհում գոյություն ունեցող կրոնների, Հայ առաքելական եկեղեցու պատմությամբ, դավանաբանական առանձնահատկությունների և տոնաձիսական համակարգի վերաբերյալ: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - հասկանալու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկությունները ու միտումները, ✓ (ընդհանրական կարողություններ) - կատարելու տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:
Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Հայ առաքելական եկեղեցին V-IX դարերում: Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
Հիմնական գրականության ցանկը 1. Ալիշան Դ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002 : 2. Աստվածաշունչ 3. Алов А.А., Владимирон Н. Г., Овсиенко Ф.Г., Мировые религии, М., 1998г.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

0101/B02	Համակարգչից օգտվելու հմտություններ	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
1 կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքների մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • աշխատելու Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • կատարելու իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):		
Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:		
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:		
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Microsoft Word 2000. Эйткен, Вильямс, Питер, 2000.		

2. Microsoft Excel 2000. Рычков В., Питер, 2000 .
3. Microsoft Word 2000. Справочник, Ю. В. Колесников, Питер, 2000 .
4. Microsoft Excel 2000. Справочник, Б. Карпов, Питер, 2000 .

0001/B05	Քաղաքացիական պաշտպանություն	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
5 կիսամյակ	Ստուգաք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԱԻ-ում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությունը և կատարմանը: Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • հնարավոր ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և անհրաժեշտ պաշտպանվելու ձևերի ու մեթոդների մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնելու պաշտպանվելու ձևերն ու մեթոդները, ✓ (ընդհանրական կարողություններ) • ստեղծագործաբար մոտենալու ԱԻ-ում և պատերազմական պայմաններում անհրաժեշտ պաշտպանվելու ձևերին ու մեթոդներին: Համառոտ բովանդակությունը Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և		

պատերազմի ժամանակ: Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը՝ գործնական:
Հիմնական գրականության ցանկը 1. Եզորով Պ.Տ., Շլյախով Ի.Ա., Մորզովինով Դ., Սիմոնենկո Ի.Վ., Սիպայլո Յու. Ա., Քաղաքացիական պաշտպանություն, Երևան, 1968: 2. Զայցև Ա.Պ., Կորժավին Ա.Վ., Կոնյև Ա.Ի., Քաղաքացիական պաշտպանություն, Հայաստան, 1984:

0001/B06	Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
5 կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրավիճակ, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:		
Դասընթացը ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ:		
Ունակ կլինի.		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերելու առաջին և մինչբժշկական օգնություն,		
✓ (ընդհանրական կարողություններ)		
ցուցաբերելու առաջին բուժօգնություն		

Համառոտ բովանդակությունը

Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: Սուր հիվանդություններ և թունավորումներ: Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը գործնական:

Հիմնական գրականության ցանկը

1. Առաջին օգնության հիմունքները:
2. Առաջին օգնության տարրերը: Հայկական կարմիր խաչի ընկերություն. մարդասիրության ուժը:
3. В. М. Буонов, Первич. Медицинская помощь.
4. В. В. Юуенич, Первич. помощь при травмах.

0103/B01	Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել Էկոլոգիական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց Էկոլոգիա գիտության պատմությանը, բնական համակարգերի կազմավորման, գործունեության հիմունքներին, բնություն-հասարակություն համակարգում Էկոլոգիայի հիմնախնդիրներին		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • Էկոլոգիայի՝ որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի Էկոլոգիայի, Էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների վերաբերյալ: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կատարելու ջրի, հողի և օդի ֆիզիկական, քիմիական և կենսա-		

բանական անալիզներ: ✓ (ընդհանրական կարողություններ) վերլուծություններ կատարել էկոլոգիական վիճակի մասին և կատարել համապատասխան եզրակացություններ:	
Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, Էկոգործոններ: Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: Պոպուլյացիոն էկոլոգիա: Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:	
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:	
Հիմնական գրականության ցանկը - Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010: - Մելքոնյան Լ., Էկոլոգիայի հիմունքներ, Երևան, 2008: - Գրիգորյան Կ., Եսայան Ա., Բնապահպանություն և աստվածաբանություն, Երևան, 2007:	

0102/B01	Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորմանը, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:		

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- բնագիտության զարգացման հիմնական փուլերի, բնագիտության հիմնական սկզբունքների, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոյուցիայի կոնցեպցիաների վերաբերյալ:

Ունակ կլինի.

✓ ***(բուն մասնագիտական կարողություններ)***

- բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները կիրառելու տնտեսագիտական տարբեր հետազոտություններում:

✓ ***(ընդհանրական կարողություններ)***

- կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

Համառոտ բովանդակությունը

Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիստական պատկերը: Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոյուցիայի կոնցեպցիաները: Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոյուցիայի կոնցեպցիաները: Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոյուցիայի կոնցեպցիաները: Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: Էվոյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպա-

նության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր., Զանգակ -97, 2010:

2. Канке В.А. Концепции современного естествознания, М., Логос, 2002.
3. Буданов В.Г., Мелехова О.П., Концепции современного естествознания. МГТУГА, 1998.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

0202/B01.	Տնտեսական և սոցիալական աշխարհագրություն	4 կրեդիտ
4 ժամ	40/24/0	
I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համապարփակ գիտելիքներ հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության հիմնարար հասկացությունների, բաղադրիչների, աշխարհի քաղաքական քարտեզի, բնական պայմանների և ռեսուրսների, համաշխարհային տնտեսության և նրա առանձին ոլորտների ու ճյուղերի, համամոլորակային հիմնախնդիրների և ինքնատիպ տարածաշրջանների մասին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • կունենա պատկերացում Աշխարհագրության միասնական գիտության համակարգում “հասարակական աշխարհագրության” տեղի և դերի մասին, • կունենա կայուն գիտելիքներ հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունների, աշխարհի քաղաքական քարտեզի և համաշխարհային տնտեսության մասին: <i>Ունակ կլինի.</i> • Սոցիալ-տնտեսաաշխարհագրական գիտելիքները կիրառելու գործնականում խնդիրներ լուծելու համար: ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • իրականացնել սոցիալ-տնտեսաաշխարհագրական վերլուծություններ • կատարել սոցիալ-տնտեսաաշխարհագրական երևույթների և		

հասկացությունների մեկնաբանություններ ✓ (ընդհանրական կարողություններ) - կկարողանա կիրառել հետազոտության և ուսումնասիրության սոցիալ-տնտեսաաշխարհագրական մեթոդները - կտարբերակի համաշխարհային տնտեսության, քաղաքական քարտեզի և համամոլորակային հիմնախնդիրների տարածաշրջանային առանձնահատկությունները:		
Համառոտ բովանդակությունը Դասընթացի ուսումնասիրության նպատակը և խնդիրները, բովանդակությունը և կառուցվածքը, գրական աղբյուրների տեսություն: Հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունները: Բնական պայմաններ և ռեսուրսներ: Աշխարհի քաղաքական բաժանումը և քարտեզը: Համաշխարհային տնտեսությունը և ԳՏՀ-ը: Համաշխարհային տնտեսության ոլորտների ու ճյուղերի բնութագիրը: Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները: Աշխարհի ինքնատիպ տարածաշրջանները:		
Գնահատման մեթոդները և չափանիշները. 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, - եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով (հարցատոմսը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):		
Հիմնական գրականության ցանկը 1. Родионова И. А., Экономическая и социальная география мира, М., 2012. 2. Максаковский В.П., Общая социально-экономическая география, часть 1, часть 2, М. 2009.		

0202/B02.	Սոցիալ մշակութային ծառայությունների և զբոսաշրջության ներածություն	3 կրեդիտ
3 ժամ	32/16/0	
II կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մասնագիտության բովանդակությանը, խնդիրներին, ուղղություններին, ներ-		

կայացվող պահանջներին:

Բացահայտվում է սոցիալ-մշակութային ծառայություններ դերը և նըշանակությունը ընդհանրապես սերվիսի, մասնավորապես՝ զբոսաշրջության բնագավառում: Ուսումնասիրվում են սոցիալական պայմանների գնահատումը, մշակութային ծառայությունների տեսակները, զբոսաշրջության դերը և նշանակությունը հասարակական կյանքում:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կկարողանա ներկայացնել իր մասնագիտության տեսական և կիրառական կողմերը,
- կտիրապետի մասնագիտության հետ կապված հասկացություններին, օրենքներին, մեթոդներին:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- տարանջատելու սոցիալ -մշակութային ծառայությունների և զբոսաշրջության մասնագիտությանը առաջադրվող տեսական և գործնական պահանջները

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կկարողանա առանձնացնել սոցիալ -մշակութային ծառայությունների ձևավորման տնտեսագիտական և սոցիալական նախադրյալներն ու գործոնները
- կկարողանա կիրառել մասնագիտական հիմնական տեսությունները, օրենքներն ու կատեգորիաները

Համատար բովանդակությունը

Ներածություն: Սոցիալ-մշակութային ծառայությունը, որպես տնտեսության ճյուղ: Սոցիալ-մշակութային ծառայության բովանդակությունը: Սոցիալ-մշակութային ծառայությունների դասակարգումը: Բնակչությունը՝ որպես ծառայություններ կրող: Ծառայությունների մատուցման գործընթացը: Ծառայությունների նպատակը և ծառայությունների բազմաբովանդակությունը: Սոցիալ-մշակութային ծառայությունների իրականացումը

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն

արժեքով (հարցատոմսը պարունակում է 5 հարց, յուրաքանչ-յուրը՝ 2 միավոր: Միավորների քայքայ 0.5 է):
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Косолапов А.Б. Теория и практика экологического туризма. М., 2005г. 2. Котлер Ф., Боуэн Дж. Маркетинг: гостеприимство и туризм. М., 2002г. 3. Сенин В.С. Введение в туризм. М.:1993г.

0202/B03.	Ընդհանուր երկրագիտություն	3 կրեդիտ
3 ժամ	32/16/0	
I կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել կայուն գիտելիքներ Երկիր մոլորակի և նրա աշխարհագրական թաղանթի ու նրա ոլորտների ձևավորման, զարգացման , նրանցում տեղի ունեցող բազմաթիվ բնական երևույթների փոխադարձ կապի, մարդու և աշխարհագրական թաղանթի մասին, ինչպես նաև բնական երևույթներն ու օբյեկտները սպասարկման և ռեկրեացիոն նպատակներով օգտագործելու համար:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> - Ունակ կլինի հասկանալու Երկիր մոլորակում տեղի ունեցող բնական բազմաթիվ երևույթների առաջացման պատճառները և դրանց հետևանքները <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - Ունակ կլինի հասկանալու բնական տարբեր երևույթների միջև ընթացող փոխադարձ կապերը և ստացած գիտելիքները կիրառելու սպասարկման և տուրիզմի ոլորտում՝ մարդու հաճախումն պահանջումները բավարարելու նպատակով:		
<i>Համառոտ բովանդակությունը</i> Ընդհանուր երկրագիտություն առարկան, խնդիրները, Հիմնական տվյալներ Երկիր մոլորակի մասին: Մասշտաբ, աշխարհագրական քարտեզ: Երկրի ձևը, մեծությունը: Երկրի օրական և տարեկան պտույտները, դրանց աշխարհագրական հետևանքները: Աշխարհագ-		

րական թաղանթ, սահմանները, կառուցվածքը: Քարտուրտ: Երկրի ռելիեֆը, հիմնական ձևերը: Կարստային ռելիեֆի ձևերը: Աշխարհների նշանավոր կարստային քարայրները: Մթնոլորտ: Եղանակ, կլիմա, դրանց ուսումնասիրությունների դերը սերվիսի և տուրիզմի զարգացման գործում: Ջրոլորտ, կազմը: Համաշխարհային օվկիանոս, մայրցամաքային ջրեր, դրանց դերը սպասարկման և տուրիզմի գործում: Կենսոլորտ, կառուցվածքը: Բուսական և կենդանական աշխարհի դերը սպասարկման և տուրիզմի զարգացման ու կազմակերպման գործում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով (հարցատոմարը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):

Հիմնական գրականության ցանկը

1. Любукина С.Г., Пашканг К.В. Общее землеведение. Учеб. Пособие для. Студ. Вузов обуч. по спец. “география” М. Просвещение, 2004, 288 с.
2. Шубаев Л.П. Общее землеведение. М., Высш. школа, 1977, 410 с.
3. Գաբրիելյան Հ.Կ. Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական թաղանթը, Երևան 1983, էջ 318:

0202/B04	Հայ ազգագրություն	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
I կիսամյակ	Ընթացիկ ստուգումներ	
Դասընթացի նպատակն է ներկայացնել հայոց ազգաբանության ուսումնասիրության հիմնախնդիրները, դասավանդման մեթոդները, ճանաչողական նշանակությունը, դասդասման սկզբունքներն ու ժամանակագրական շրջանակները, պատմական և արդիական առումները, գիտության տեղը հայագիտության համակարգում: Բացահայտել հայ ժողովրդի կենցաղամշակութային յուրահատկությունները, հարևան ժողովուրդների հետ ունեցած կենցաղամշակութային փոխառնչությունները, ժողովրդագրական և էթնոմշակութային պատկերը:		

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա հայերի և Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների էթնոկենցաղամշակույթը,

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ծանոթանալու էթնոգենեզին և էթնիկ պատմությանը,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կկարողանա արտադրական, կենսաապոհովման, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթներին:

Համառոտ բովանդակությունը

Հայերն աշխարհի էթնիկ հանրությունների համակարգում. հայերի էթնոլեզվական, մարդաբանական, խառնվածքային, դավանաբանական, ժողովրդագրական բնութագիրը: Ավանդական և ժամանակակից արտադրական մշակույթը. երկրագործական մշակույթ, անասնապահական մշակույթ, տնայնագործական և արհեստագործական մշակույթ, համքարական կազմակերպություններ. օժանդակ տնտեսաձևեր. ժողովրդական փոխադրամիջոցներ, կապի միջոցներ: Կենսաապահովման մշակույթ (բնակավայր, բնակարան, տարազ և զարդարանք, ուտեստ, ռեգիոնալ առանձնահատկությունները): Սոցիոնորմատիվ մշակույթ (ընտանեկան, վարվելակարգ, ամուսնության ավանդույթային ձևեր, հարսանիք, որդեծնություն և մանկան դաստիարակություն, հուղարկավորում, մեռելոց, գյուղական համայնք, ազգակցական համակարգ):

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:
- 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:
- 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Վ.Հ. Բդոյան, Խմբ. Պ.Մ. Մուրադյան, Կ.Վ. Մեղրոսյան, Հայ ազգագրություն: Համառոտ ուրվագիծ, Երևան, ԵՊՀ հրատ., 1974:
2. Ս. Վարդանյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, պր. 24, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»

հրատ., 2007, 222 էջ: 3. Հ. Գաբրիելյան, Ազգերի և ազգային կուլտուրաների զարգացման օրինաչափությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 1973:
--

0202/B05.	Սերվիսի հիմունքներ	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	40/24/0	
II կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ սերվիսի բովանդակության, անհրաժեշտության, գործնական նշանակության մասին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • ուսանողները կստանան համակարգված գիտելիքներ սերվիսի ոլորտի, նրա առանձին բ աղադրիչների վերաբերյալ, <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կսովորի հյուրասիրության, հյուրանոցային գործի, զբոսաշրջության, ռեսուրսային գործի և սերվիսի մյուս տեսակների կազմակերպումը, ✓ (ընդհանրական կարողություններ) • ձեռք կբերի կարողություններ ինքնուրույն կերպով կազմակերպելու սերվիսի տարբեր ոլորտների աշխատանքները:		
Համառոտ բովանդակությունը Սերվիսի բովանդակությունը, դերը, զարգացման նախադրյալները, գործունեությունը: Սերվիսային գործունեությունը որպես պահանջարկի բավարարման միջոց: Սերվիսային ծառայություն, որակը, սերվիսային ձեռնարկության գործունեության նպատակայնությունը: Սերվիսային ծառայությունների հիմնական տեսակները և դասակարգումը: Տրանսպորտային ձեռնարկությունների կազմակերպում և նպատակայնացում: Ֆինանսի բնագավառում սերվիսային գործունեության առանձնահատկությունները: Զբոսաշրջության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:		
Գնահատման մեթոդները և չափանիշները • 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,		

- Եզրափակիչ քննությունը քանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր: Միավորների քայքայ 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Романович Ж.А., Калачев С.Я. Сервисная деятельность, Учебник, М.: 2008, 267с.
2. Богушева В.И., Организация обслуживания ресторанов и баров, М. 2007.
3. Гостиничный и туристический бизнес, Под ред.проф. А.Д. Чудновского, Тандем,1988.
4. Кениг Д.,Штойян Д. Методы теории массового обслуживания.: Пер. с нем./ Под.ред. Г.П.Климова. М.,1981.
5. Кулибанова В.В. Маркетинг:сервисная деятельность.СПб.: Питер, 2000.
6. Николаева М.А. Маркетинг товаров и услуг: Учебник. М.: Деловая литература, 2001.
7. Стаханов В.Н.,Станова Ф.В. Маркетинг сферы услуг, Учебное пособие. М.:2001.
8. Федцов В.Г. Культура сервиса.,Учебно-практическое пособие., М. 2000.
9. Рендер Б. Управление и организация в сфере услуг. Теория и практика. СПб, Питер,2002.

0202/В06.	Մերվիսի աշխարհագրություն	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
II կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական և համակարգված գիտելիքներ հաղորդել սպասարկման ոլորտի աշխարհագրության հիմունքների, սերվիսային սպասարկման ոլորտի և նրա առանձին ուղղությունների տարածքային կազմակերպման սկզբունքների և ձևերի վերաբերյալ		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i>		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• Ծանոթ կլինի սպասարկման ոլորտի բովանդակությանն ու կառուցվածքին, տնտեսության ճյուղային կառուցվածքում նրա		

տեղին և դերին,

- Կտիրապետի սերվիսային սպասարկման ոլորտի միջոցիսցիս-լինային ուսումնասիրությունների սկզբունքներին,
- Կհասկանա սպասարկման ոլորտի աշխարհագրական ու-սումնասիրությունների էությունը, հիմնական բնորոշ կողմերը և առանձնահատկությունները,
- Կիմանա սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպ-ման համակարգերի, դրանց առանձնահատկությունների մա-սին,
- Ծանոթ կլինի սերվիսի աշխարհագրության ուսումնասիրութ-յան օբյեկտին, առարկային, խնդիրներին, կառուցվածքին, այլ գիտությունների հետ ունեցած կապերին և գիտությունների համակարգում ունեցած տեղին,
- Կտիրապետի սերվիսի աշխարհագրական հետազոտություն-ների մեթոդներին,
- Կունենա սերվիսային ծառայությունների առանձին տեսակնե-րի (զբոսաշրջային, սանատոր-առողջարանային, հյուրանոցա-յին, հոգևոր-մշակութային և այլն) տարածքային կազմակերպ-ման գործոնների և ձևերի իմացություն

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Գնահատելու սպասարկման ոլորտի տարածքային կազմա-կերպման վրա բնական և սոցիալ-տնտեսաաշխարհագրական գործոնների ազդեցությունը,
- Վերլուծելու սպասարկման ոլորտի, նրա առանձին ուղղութ-յունների աշխարհագրական ուսումնասիրությունների հիմնա-կան ցուցանիշները,
- Կատարելու սերվիսային ծառայությունների առանձին տե-սակներին առնչվող թեմատիկ քարտեզների, աղյուսակների և դիագրամների վերլուծություն և ընդհանրացում,
- Կատարելու սպասարկման ոլորտի բացարձակ և հարաբերա-կան ցուցանիշների հաշվարկ կոնկրետ տարածքային միավո-րի օրինակով՝ առկա վիճակագրական տվյալների հենքի վրա,
- Համեմատելու սպասարկման ոլորտի զարգացման մակար-դակներն ըստ առանձին տարածքային միավորների, կատա-րելու տարածքային տարբերությունների գնահատում և վերլու-ծություն,

- Կառուցելու ծառայությունների առանձին տեսակների տեղաբաշխմանն առնչվող աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկներ,
- Գործնականում կիրառելու սերվիսի ոլորտի աշխարհագրական հետազոտությունների հիմնական մեթոդները,
- Վերհանելու և գնահատելու սոցիալ-մշակութային ծառայությունների հիմնական տեսակների տարածքային կազմակերպման վրա ազդող գործոնները

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով օգտվել թե՛ տպագիր և թե՛ էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների տարբեր տեսակներից (մասնագիտական գրականություն, ճյուղային և տարածքային վիճակագրական տարեգրքեր, հաշվետվություններ, զեկույցներ, գիտական հոդվածներ, էլեկտրոնային գրադարաններ, տեղեկատվական այլ ռեսուրսներ),
- Կատարելու փաստերի վերլուծություն, եզրահանգումներ և ընդհանրացումներ,
- Ունեցած գիտելիքները կիրառելու ստեղծագործաբար,
- Ռացիոնալ կերպով պլանավորելու և բաշխելու ժամանակը, այլ ռեսուրսները,
- Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,
- Դրսևորելու քննադատական մտածողություն,
- Նախաձեռնելու կառուցողական բնույթի գիտական բանավեճեր

Համառոտ բովանդակությունը

Կառուցվածքային առումով դասընթացի շրջանակներում առանձնացվում են հետևյալ բաժինները. սերվիսային գործունեություն և սպասարկման ոլորտ, սպասարկման ոլորտը՝ որպես միջճյուղային գիտական հետազոտությունների ոլորտ, նրա աշխարհագրական ուսումնասիրությունների հիմնական ուղղություններն ու ցուցանիշները, սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը և համակարգերը, սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, խնդիրները, կառուցվածքը, կապն այլ գիտությունների հետ, սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության մեթոդները: Անդրադարձ է կատարվում ծառայությունների առանձին տեսակների (զբոսաշրջային, սանատոր-առողջարանային, հյուրանոցային, ու-

ղևորատրանսպորտային, գիտակրթական և հոգևոր-մշակութային) աշխարհագրությունը

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 4-ական միավոր, 1 հարցը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Меркушева Л. А., География сферы обслуживания населения. Крас. 1989г. 184с.
2. География сферы обслуживания., М., 1977 (науч. Ред. Ковалев. С. А.).
3. Абрамов А. Н., География сервиса. М. 1985.

0202/B07.	Տուրիստական երկրագրություն	4 կրեդիտ
2 ժամ	40/24/0	
II կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված և ամբողջական գիտելիքներ հաղորդել տուրիզմի զարգացման տեսանկյունից տուրիստական երկրագրական վերլուծության և տեսության վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• կիմանա տարբեր երկրների ու տարածաշրջանների օրինակով տուրիստական երկրագրության հիմնական բաղադրիչների վերլուծության հիմնական մեթոդները և հիմնական ուղղությունները		
<i>Ունակ կլինի</i>		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• կատարել երկրագրության առանձին բաղադրիչների գնահատում տուրիստական հնարավորությունների օգտագործման և տուրիզմի զարգացման տեսանկյունից:		
✓ (ընդհանրական կարողություններ)		

կհասկանա տուրիստական երկրագրության հիմնական բաղադրիչների հատկանիշներն ու փոխադարձ կապերը:
<i>Համառոտ բովանդակություն</i> Տուրիստական երկրագրության աշխարհագրական էությունը: Տուրիստական երկրագրության գործառույթները, հիմնախնդիրները, գործնական նշանակությունը: Տուրիստական երկրագրությունը և տուրիզմը: Տուրիստական երկրագրության վերլուծության սխեմաները: Տուրիստական երկրագրության հիմնական բաղադրիչները, դրանց տուրիստական հնարավորությունների գնահատումը:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, - Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 4 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> - Վալեսյան Լ., Հասարակական աշխարհագրության ներածություն., Ե., 1999: - Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Աշխարհի բնակչությունը, Ե., 2004: - Машбиц Ю.Г., Основы страноведения., М., 1999г. ,263с. - Мироненко Н. С., Страноведение, М., 2001.268с. - Родоман Б. Б., Введение в социальную географию, М., 1993. - Социальная география СССР, Л., 1984г. - Джонстон Р., География и географы (пер. англ.), Очер. Развития. Англо-американской социальной географии, М., 1987г. - Ушаков Д.С., Страноведение, М., 2007.

0202/B08	Հայաստանի պատմական աշխարհագրություն	5 կրեդիտ
4 ժամ	40/24/0	
III կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել կայուն գիտելիքներ պատմական անցած ժամանակաշրջանում Հայաստանի և հա-		

րակից երկրների բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, վարչաքաղաքական իրավիճակի, բաժանումների և տնտեսության վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և խմացություն

- կստանա կայուն գիտելիքներ պատմական անցած ժամանակաշրջանի Հայաստանի և հարակից երկրների պատմա-աշխարհագրական տարաբնույթ հարցերի մասին
- կունենա կոնկրետ փաստական գիտելիքներ Հայաստան աշխարհի տարբեր շրջանների (գավառների, նահանգների), պատմական տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ:
- կկարողանա պատմաաշխարհագրական գուգահեռներ անցկացնել և լայնորեն կիրառել հետազոտության պատմա-աշխարհագրական մեթոդը:

Ունակ կլինի

✓ ***(բուն մասնագիտական կարողություններ)***

- անցկացնելու պատմաաշխարհագրական գուգահեռներ
- կիրառելու հետազոտության և ուսումնասիրության պատմաաշխարհագրական մեթոդը:

✓ ***(ընդհանրական կարողություններ)***

- կկարողանա հիմնավորել Հայաստանի և նրա առանձին տարածաշրջանների պատմաաշխարհագրական տարաբնույթ առանձնահատկությունները և պատմական ժամանակաշրջանում կրած փոփոխությունները

Համառոտ բովանդակությունը

Դասընթացի բովանդակությունը, կառուցվածքը, ուսումնասիրման նպատակը և խնդիրները, գիտամեթոդական նշանակությունը, գրական աղբյուրների տեսություն: Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները և ռեսուրսները: Հին Հայաստանի բնակչությունը: Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները և դրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը: Հին Հայաստանի տարածքը և վարչատարածքային բաժանումը սկսած առաջին հիշատակությունից մինչև VII դարը: Հին Հայաստանի պատմաաշխարհագրական համառոտ նկարագիրն ըստ «Աշխարհացույցի»: Հայաստանի վարչաքաղաքական վիճակն ու տնտեսությունը VII դարի կեսերից IX դ կեսերը: Հայաստանի վարչաքաղաքական վիճակն ու տնտեսությունը IX դարի

կեսից մինչև 1045թ.: Հայաստանի վարչաքաղաքական դրությունը, տնտեսությունը և բնակչությունը XIդ. կեսերից մինչև XIII դարի 30-ական թվականները: Հայաստանի քաղաքական կյանքի և տնտեսության անկումը XIII դարի 30-40 թթ. մինչև XV դարի վերջը: Հայաստանի վարչաքաղաքական վիճակն ու տնտեսությունը XVI- XVIII դարերում: Հայաստանը XIX դարից մինչև XX դարի սկիզբը: Հայաստանը խորհրդային տարիներին: Գնահատման մեթոդները և չափանիշները • 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, • Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: Հիմնական գրականության ցանկը 1. Թ.Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 2007: 2. Թ.Խ. Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987: 3. Թ.Խ. Հակոբյան, Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Երևան, 1990: 4. Լ. Հ. Վալեսյան, Հայկական ԽՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 1988:
--

0301/B09.	Հայ եկեղեցու պատմություն	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
III կիսամյակ	Ընթացիկ ստուգումներ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հայ առաքելական եկեղեցու մշակույթին ու ավանդույթներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա Հայ եկեղեցու ծագման ու պետական հռչակման մասին: Եկեղեցու կառուցվածքը, խորհուրդները և ծեսերը: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • հասկանալու եկեղեցու կառուցվածքը, եկեղեցու առանձնա-		

հատկությունները այլ եկեղեցիների համեմատությամբ, ✓ (ընդհանրական կարողություններ) կկարողանա տարբերել հայ և այլ եկեղեցիների առանձնահատկությունները, եկեղեցական կառույցների ժամանակաշրջանը:
Համառոտ բովանդակությունը Հայ եկեղեցու ծագումն ու «Պետական հոչակումը»: Հայ եկեղեցու առանձնահատկությունները այլ եկեղեցիների համեմատությամբ: Հայ եկեղեցու խորհուրդներն ու ծեսերը: Հայ եկեղեցու կառուցվածքն ու ներկայիս թեմական բաժանումները: Հայ եկեղեցու հայաստանյան թեմերը: Եկեղեցական ու մշակութային կառույցները՝ ըստ թեմերի:
Գնահատման մեթոդները և չափանիշները 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է: 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. http://www.etchmiadzin.com. 2. http://www.armeniancatholic.org. 3. http://www.armenianorthodoxchurch.org. 4. http://www.lusamut.net.

0202/ B10.	Տուրիզմի հիմունքներ	5 կրեդիտ
5 ժամ	56/24/0	
III կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել կայուն գիտելիքներ տուրիզմի էության, նպատակների, ռեսուրսների, ենթակառուցվածքների, տարածքային կազմակերպման, զբոսաշրջության միջազգային շուկայի, տուրիզմի ինդուստրիայի, տուրօպերատորական և տուրգործակալական գործունեության, տուրիստական արտադրանքի, զբոսաշրջության կարգավորման և կառավարման վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն

- կիմանա տուրիզմի՝ որպես տնտեսության ոլորտի, բոլոր բաղադրիչների փոխադարձ կապի և փոխազդեցության մասին:
- կհասկանա զբոսաշրջության ռեսուրսների, տարածքային կազմակերպման և զբոսաշրջության ինդուստրիայի դերը զբոսաշրջության շուկայում:

Ունակ կլինի.

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- գնահատելու տարբեր տարածաշրջանների տուրիստական ռեսուրսները
- վերլուծելու տուրիզմի ինդուստրիայի զարգացման միտումները:

✓ (ընդհանրական կարողություններ)

- կկարողանա վերլուծել և գնահատել տարածքի զբոսաշրջային ներուժը, զբոսաշարային ինդուստրիայի բաղադրիչը և զարգացման առանձնահատկությունները:

Համատարբ րովանդակությունը

Տուրիզմի /զբոսաշրջության/ էությունը, նպատակը և գործառույթները, տեսակները, ձևերը և նշանակությունը: Զբոսաշրջության ռեսուրսները և ենթակառուցվածքը: Զբոսաշրջության տարածքային կազմակերպումը: Միջազգային զբոսաշրջային շուկան: Զբոսաշրջության ինդուստրիա: Տուրօպերատորական և տուրգործակալական գործունեություն: Տուրիստական արտադրանք: Զբոսաշրջության կարգավորումը և կազմակերպումը:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2,5-ական միավոր: Միավորների քայքայ 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Кусков А.С., Джаладян Э.А., Основы туризма, Кнорус, М., 2008, 400с.
2. Биржаков М.Б., Введение в туризм, М., 2007.
3. Квартальнов В.А. ,Теория и практика туризма, М., 2003
4. Сенин В.С., Организация международного туризма, М., Финансы и статистика, 2005.

0201/B01.	Տնտեսագիտություն	3 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	(32/16/0)	
III կիսամյակ	Ընթացիկ ստուգումներ	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ: Դասընթացը ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> - Կայուն գիտելիքներ տնտեսագիտության մեթոդաբանության հայեցակարգի վերաբերյալ - Կկարողանա տնտեսագիտության սկզբունքների հենքի վրա մշակել աշխարհագրության, ուսումնասիրության առարկայի, օբյեկտի բովանդակությունը <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - Զուգահեռներ անցկացնելու տեսագիտության և հասարակական աշխարհագրության սկզբունքների, մոտեցումների միջև - Կիրառելու հետազոտության մեթոդը՝ մեկ ընդհանրության մեջ տեսնելով տնտեսական աշխարհագրության հայեցակարգը - Ուսումնասիրելու օբյեկտը, դիտելու որպես մեկ ընդհանրություն: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - կկարողանա ստացած գիտելիքների կիրառման միջոցով մշակել սերվիսի ոլորտի օբյեկտների գործունեության տնտեսական գնահատականը		
Համառոտ բովանդակությունը Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: Սպառողի վարքի տեսություն: Արտադրության ծախսերը: Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները Ռեսուրսների գների ձևավորումը: Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: Փո-		

ղը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: Միջազգային տնտեսական գործակցություն: Անցումային տնտեսության հիմունքները:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:
- 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:
- 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Պոլ. Ա.Սամուելսոն Տնտեսագիտություն, Երևան, 1995 թ.
2. Ջեյմս Գոռնի և ուրիշներ, Տնտեսագիտություն, Երևան, 1999 թ.
3. Տնտեսագիտության ներածություն, ԵՊՀ հրատ. 2009

0202/B11.	Զբոսաշրջության սոցիոլոգիա	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	40/24/0	
IV կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողին տալ ընդհանրական գիտելիքներ սոցիոլոգիայի վերաբերյալ: Մասնավորապես պարզաբանել սոցիոլոգիայի ուսումնասիրության օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտակարգային մեթոդաբանական մոտեցումները, կատեգորիալ ապարատը, տալ ուսումնասիրության հիմնական օբյեկտի՝ հասարակության առանձնահատկությունների, կառուցվածքային տարրերի, գործընթացների վերաբերյալ ընդհանրական տեղեկություններ:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա սոցիոլոգիայի տեսական, մեթոդաբանական հիմքերը, գիտության առանձնահատուկ մոտեցումները, եղանակները, գործիքները, <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • հասկանալու հասարակության կառուցվածքային, գործառնա-		

կան առանձնահատկությունները, սոցիալական գործընթացները, ժամանակային, տարածական հատկությունները և այլն, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • հիմնվելով տեսական նյութի, ուսումնասիրված մեթոդաբանական մոտեցումների վրա՝ կկարողանա մեկնաբանել, բացատրել մի շարք հասարակական գործընթացներ, հասարակական կառուցվածքային առանձնահատկություններ:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Ներածություն: Սոցիոլոգիական մոտեցումներ և տեսական պարզիզմաներ: Հասարակությունը որպես սոցիոլոգիայի ուսումնասիրման առարկա, հասարակություն սոցիալական կառուցվածք: Սոցիալական ինստիտուտներ: Սոցիալական խմբեր, կամակերպություններ: Սոցիալականացում: Շեղվող վարք սոցիալական վերահսկողություն: Ազգաբնակչություն, ուրբանիզացիա, միգրացիա: Սոցիալական շերտավորում, անհավասարություն :Սոցիալական փոփոխություններ:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> • 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: • 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է: • 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Дмитриева Е.А., Фокус группы в маркетинге и социологии, М., 2006г. 2. Ядов В.А., Стратегия социологического исследования, М., 2006г. 3. Григорьев С.И., Начала современной социологии, М., 1999г.

0202/B12.	Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն	6 կրեդիտ
6 ժամ	64/32/0	
IV կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիք-		

ներ տալ ուսումնասիրության առարկայի, նպատակի և խնդիրների, մեթոդաբանության վերաբերյալ, ծանոթացնել ռեգիոնալ ուսումնասիրությունների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և խմացություն

- Կիմանա համաշխարհային տնտեսության ձևավորման տեղաբաշխման սկզբունքները, դրանց աշխարհագրական տեղաշարժերը և պատճառները
- Առանձին երկրների սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը, ռեգիոնալ զարգացման գործընթացի բովանդակությունը
- Կկարողանա տեսնել կապը համաշխարհային և առանձին ռեգիոնների և բնակիչների աշխատանքային կուլտուրայի միջև

Ունակ կլինի.

✓ ***(բուն մասնագիտական կարողություններ)***

- հասկանալու համաշխարհային տնտեսության մեջ կատարվող տնտեսական ինտեգրումները, նրանց բովանդակությունը, դերն ու նշանակությունը
- Կտիրապետի սոցիալ-տնտեսական զարգացումների ռեգիոնալ ուսումնասիրությունների մեթոդներին

✓ ***(ընդհանրական կարողություններ)***

- Գաղափար կկազմի հասարակական կյանքի համաշխարհային գործընթացի, նրանց մեջ սոցիալ-տնտեսական գործընթացների դերի մասին
- Կհասկանա համաշխարհային և ռեգիոնալ սոցիալ-տնտեսական գործընթացների էությունը, զարգացումները

Համառոտ բովանդակությունը

Ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանությունը: Համաշխարհային տնտեսության ընդհանուր բնութագիրը: Համաշխարհային տնտեսության ձևավորումը, տնտեսության առանձին ոլորտների և ճյուղերի բնութագիրը: Երկրների տիպաբանությունը: Զարգացած երկրներ, զարգացող երկրներ, անցումային տնտեսություն ունեցող երկրներ: Երկրների բաժանումը ըստ ռեգիոնների՝ Արևմտյան Եվրոպա, Արևելյան Եվրոպա, Ռուսաստանի Դաշնություն, Հարավ-Արևմտյան Ասիա, Հարավային Ասիա, Հարավ արևելյան Ասիա, Կենտրոնական Ասիա, Արևելյան Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Աֆրիկա: Ռեգիոնների տնտեսական, քաղա-

քական, սոցիալական և սերվիսի ոլորտում կարևոր նշանակություն ունեցող երկրների՝ ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիայի և այլք բնութագիրը: Սերվիսի ոլորտի դերն ու նշանակությունը համաշխարհային տնտեսության և առանձին երկրների տնտեսության մեջ:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմարը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր: Միավորների քայք 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Алисов Н.В., Хорев Б.С. „Экономическая и социальная география мира., Общий обзор., М., 2000.
2. Максаковский В.П., Географическая картина мира, Кн.1и2.,М., 2005.
3. Гладкий Ю.Н.,Сухоруков В.Д.,Общая Экономическая и социальная география зарубежных стран, М.,2006.
4. Кусков А.С., Понукалин О.В., Социально-экономическая и политическая география мира и России, М., 2005.
5. Лопатников Д.Л., Экономическая география и регионалистика ,М., 2004.
6. Максаковский В.П., Географическая картина мира, Кн. 1 и 2., М., 2005.
7. Социально-экономическая география зарубежных стран, Под ред. Вольского В.В., М., 2005.

0202/ B13.	Բնակչության աշխարհագրություն ազգագրության հիմունքներով	4 կրեդիտ
4 ժամ	40/24/0	
IV կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ բնակչության թվի, շարժի, կազմի, տեղաբաշխման, ավանդույթների, սովորույթների, բնակավայրերի և դրանց տարածական խմբերի վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն

- կիմանա բնակչության աշխարհագրության հիմնական հասկացությունները և այն բնութագրող հիմնական ցուցանիշները:

Ունակ կլինի.

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- կկարողանա կատարել բնակչության աշխարհագրության տարբեր երևույթների ու գործընթացների, դրանց ցուցանիշների վերլուծություն և գնահատում,
- կհասկանա դրանց էությունն ու հիմնական հատկանիշները

✓ (ընդհանրական կարողություններ)

- կկարողանա կապ հաստատել բնակչության տարբեր հատկանիշների՝ սոցիալական կազմի, տնտեսության և բնական միջավայրի միջև տարբեր աշխարհագրական պայմաններում, տարբեր երկրներում

Համառոտ բովանդակությունը

Բնակչության աշխարհագրության առարկան, մեթոդները, խնդիրները: Աշխարհի բնակչությունը, նրա հաշվառումը և շարժընթացը: Բնակչության վերարտադրությունը: Բնակչության սեռատարիքային և ընտանեկան կառուցվածքը: Բնակչության ռասսայական կազմը: Բնակչության ազգային կազմը: Բնակչության սոցիալական կառուցվածքը և աշխատանքային ռեսուրսները: Բնակչության միգրացիան: Բնակչության տեղաբաշխումը: Տարաբնակեցումը և նրա ձևերը: Ուրբանիզացում: Քաղաքների դասակարգումը: Քաղաքների համակարգեր: Գյուղական բնակավայրերի աշխարհագրություն:

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 4 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Աշխարհի բնակչությունը, Ե., 2004:
2. Մանասյան Մ., Բնակչության աշխարհագրություն, Ե., 2010թ:
3. Перцик Е.Н., Города мира, География мировой урбанизации, М., 1994, 384 с.

4. Шувалов Е.В., География населения, М.1985г., 175 ст.
5. Ягельский А., География населения, М.1980 г., 383 ст.

022/B14.	Բժշկական աշխարհագրություն	5 կրեդիտ
4 ժամ	40/24/0	
I V կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողների համակարգված գիտելիքներ տալ մարդու շրջակա միջավայրի էկոլոգիական ընդհանուր վիճակի, շրջակա միջավայրը աղտոտող գործոնների վերաբերյալ: <i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • Կիմանա մարդ-բնություն փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները (բժշկական աշխարհագրություն, հիգիենա) և այլն: • Բժշկության էկոլոգիական գործոնները, <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • Հասկանալու հիվանդությունների բնական օջախների տարածման օրինաչափությունը, շրջակա միջավայրի մարդածին գործոնների ազդեցությունը մարդու առողջության վրա ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • Հասկանալ մարդու էկոլոգիայի սոցիալական գործոնների բովանդակությունը, վարակիչ և ուշ վարակիչ հիվանդությունների տարածման մեխանիզմները • Կկարողանա գնահատել շրջակա միջավայրի էկոլոգիական ընդհանուր վիճակը և նրա ազդեցությունը մարդկանց առողջության վրա: • Կկարողանա ցույց տալ այն ուղիները, որոնք կարող են բարելավվել շրջակա միջավայրը: <i>Համառոտ բովանդակությունը</i> Առարկան, նպատակը և խնդիրները: Շրջակա միջավայրը և մարդը: Շրջակա միջավայրի /բնակավայրի/ տարածքի ֆունկցիոնալ գոտիավորումը: Շրջակա միջավայրի մթնոլորտի և եղանակի փոխադարձ կապը: Շրջակա միջավայրի ջերմաստիճանային հաշվեկշիռը: Շրջակա միջավայրի աղմուկի պրոբլեմները և մարդը: Շրջակա միջավայրի		

կանաչ ծածկը: Շրջակա միջավայրի սանիտարական մաքրումը:
Գնահատման մեթոդները և չափանիշները • 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, • Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմար պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր: Միավորների քայքայ 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. Шиповская Л.П., Человек и экология, М., 2006. 2. Зорин И.В. и др., Туризм и отраслевые системы, Менеджмент туризма, М., 2002. 3. Котляров Е.А., География экотуризма, М., 1989. 4. Колотова Е.В., Рекреационное ресурсоведение, М., 1999. 5. Сергеева Т.К., Экологический туризм, М., 2004.

0202/B15.	Հայ արվեստ և ճարտարապետություն	3 կրեդիտ
Շաբաթական 3 ժամ	32/16/0	
IV կիսամյակ	Ստուգաքք	
Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել հայ արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին և արվեստագետներին, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Ներկայացնել հայ արվեստի տեղը համաշխարհային արվեստի համատեքստում, բացահայտել հայ արվեստի կապերը հունական, հռոմեական, բյուզանդական, պարսկական, արաբական, ռուսական, եվրոպական արվեստների հետ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա հայ արվեստի տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ • կծանոթանա հայ ճարտարապետության գլուխգործոցներին, նրանց տեղին ու դերին հայ ժողովրդի մշակույթի զարգացման մեջ <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ)		

• Վերլուծության միջոցով բացահայտելու այն տեղն ու դերը, որը կատարել է հայ արվեստը համաշխարհային քաղաքակրթության մեջ ✓ (ընդհանրական կարողություններ) • Կկարողանա ցույց տալ հայ արվեստի կապը հունական, հռոմեական, պարսկական տարածաշրջանի մյուս քաղաքակրթությունների հետ
Համառոտ բովանդակությունը Ներածություն: Հին հայկական և ուրարտական արվեստ: Հետուրարտական շրջանի (մ.թ.ա. 5-3-րդ դդ) և հելլենիստական Հայաստանի արվեստը (մ.թ.ա. 3դ.-մ.թ.4-րդ դ.): Վաղ միջնադարյան հայ արվեստ (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն): Հայ արվեստը զարգացած միջնադարում (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն): Հայ արվեստը 17-18-րդ դդ. (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն): Հայ արվեստը 19–րդ դարում (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն):Հայ արվեստը 20–րդ դարի առաջին կեսին (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն): Խորհրդային շրջանի հայ արվեստը (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն): Հետխորհրդային շրջանի հայ արվեստը (գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն):
Գնահատման մեթոդները և չափանիշները • 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: • 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է: • 2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց, Երևան, 2005: 2. Մարտիկյան Ե., Հայկական կերպավորների պատմություն, գիրք Ա, Բ, Գ, Դ, Երևան, 1971-1984: 3. Ազատյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975: 4. Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմությո-

յուն, Երևան, 1992: 5. Տեր-Ներսիսյան Մ., Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975:
--

0202/B16.	Տուրիստագիտություն	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	40/24/0	
V կիսամյակ	Քննություն	
Դասընթացի ուսումնասիրման ընթացքում ուսանողները ամբողջական և համակարգված գիտելիքներ են ստանում տուրիստագիտության (զբոսաշրջության) որպես տուրիզմի մասին համալիր գիտության հայեցակարգի, իմացաբանական հիմունքների, առանցքային հասկացությունների վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> - կիմանա տուրիստագիտություն առարկայի, հիմնական խընդիրների ու մեթոդների, հասկացությունների, տեսությունների այլ գիտությունների հետ կապերի մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - հասկանալու տուրիստագիտության՝ որպես համալիր գիտության հիմնական առանցքային հասկացությունների էությունը և նշանակությունը, զբոսաշրջության զարգացման տարբեր գործոնների միջև եղած փոխկապակցությունները ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - կկարողանա գնահատել տարբեր գիտությունների ունեցած դերը տուրիստագիտություն առարկայի ձևավորման և զարգացման գործում, բացահայտել տարբեր գործոնների ազդեցությունը զբոսաշրջության զարգացման գործում:		
Համառոտ բովանդակությունը Տուրիստագիտությունը որպես գիտություն տուրիզմի մասին: Տուրիզմը և հասարակական և բնական գիտությունները: Տուրիստագիտության հայեցակարգը, իմացաբանական հիմունքները: Տուրիստագիտության առանձին հասկացությունները, տուրիստական ինդուստրիա, տուրիստական ծառայություններ, տուրիստական շուկա և այլն: Տուրիստական գործառնությունները: Բնապահպանությունը և տուրիզմը: Տնտեսությունը և տուրիզմը: Տուրիզմը որպես ռեկրեացիայի միջոց:		

Գնահատման մեթոդները և չափանիշները

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմար պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Ի.Վ.Գորին, Վ.Ս.Վվարտալևով, Տուրիստիկա, Երևան, 2006, 344 էջ:
2. Кусков А.А., Дзаладян Э.А., Основы туризма, М. ,2008 .
3. Сейнойлемко А.А., География туризма, Ростов-на Дону, 2006 .
4. Александров И. Т., Международный туризма, М.2001.

0202/B17.	Հայաստանի աշխարհագրություն	7 կրեդիտ
Շաբաթական 6 ժամ	80/16/0	
V կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ Հայաստանի Հանրապետության բնական պայմանների, ռեսուրսների, բնակչության, տնտեսության (արտադրական և սերվիսի) ոլորտների տարածքային կազմակերպման և կառավարման տեսական ու գործնական գիտելիքներ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն • կիմանա ՀՀ բնական պայմանների և տնտեսական ու բնական ռեկրեացիոն՝ տուրիստական սերվիսի ռեսուրսների գնահատականը, դրանց տարածքային կառուցվածքը: Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • Վերլուծելու, գնահատելու արտադրական և սպասարկման սերվիսի տարածքային կազմակերպման ու կառավարման գործընթացը, ✓ (ընդհանրական կարողություններ) • կկարողանա գնահատել Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքի, ինչպես նաև ենթակառուցվածքների հնա-		

րավորությունները սպասարկման սերվիսի զարգացման համար:		
<i>Համառոտ բովանդակությունը</i> ՀՀ տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը, վարչատարածքային կառուցվածքը: ՀՀ բնական պայմանները և ռեսուրսները: Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման պատմաաշխարհագրական առանձնահատկությունները: Հանրապետության բնական, տնտեսական և սերվիսի ներուժի գնահատականը, բնօգտագործման և բնապահպանության խնդիրները: Բնակչությունը: Հայերը աշխարհում: Տնտեսությունը: Արդյունաբերության, գյուղատնտեսության և սերվիսի տարածքային կառուցվածքը: ՀՀ սպասարկման ոլորտը, զարգացման միտումները: Հանրապետության սպասարկման ոլորտում տարածքային կառուցվածքի փոփոխությունները վերակառուցման և շուկայական հարաբերությունների պայմաններում: ՀՀ-ն միջազգային տուրիզմի հարաբերություններում: Հայաստանի տնտեսությունը համաաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում: ՀՀ մարզերի համառոտ բնութագիրը:		
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> • 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, • Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:		
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Վալեայան Լ.Հ., Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Ե. 1988: 2. Ավետիսյան Խ.Ա., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն 3. Մակարյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Ե., 2002: 4. Հայաստանի ազգային ատլաս, Ե., 2007:		

0202/B18	Սերվիսի համակարգի	4 կրեդիտ
----------	-------------------	----------

	Էթիկետ	
Շաբաթական 4 ժամ	40/24/0	
V կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ զբոսաշրջության և հյուրանոցային սերվիսի մշակույթի վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա		
Գիտելիք և իմացություն		
• Հյուրանոցային սերվիսի մշակույթի, հյուրընկալության էթիկայի, բարոյահոգեբանական սկզբունքների վերաբերյալ • Գաղափար կկազմի ֆինանսատնտեսական վարչակառավարական համակարգի վերաբերյալ		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• Մշակելու հյուրընկալության, հյուրերի ընդունման և ճանապարհի դնելու ծրագրեր		
✓ (ընդհանրական կարողություններ)		
• Կկառդանա կազմակերպել և ղեկավարել հյուրերի ընդունումը, հյուրանոցային և էքսկուրսիոն սպասարկումը, հյուրերի ճանապարհի դնելը:		
Համառոտ բովանդակությունը		
Հյուրասիրության համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումները: Մարդկային որակը: Հյուրանոցային և զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունները: Ծառայությունների ոլորտի որակի հասկացությունները: Զբոսաշրջության ոլորտի ծառայողի վարքը: Հյուրանոցային ոլորտի ծառայողի վարքը: Հյուրասիրության մեջ ինտերնետի համակարգի դերը: Հյուրանոցային և զբոսաշրջության մշակույթի աշխարհագրական առանձնահատկությունները: Հյուրասիրության եվրոպական (արևմտյան համակարգի) առանձնահատկությունները: Հյուրասիրության արևելյան (Մերձավոր և Միջին Արևելք) համակարգի առանձնահատկությունները: Հյուրասիրության հեռավոր արևելյան (Չին-Ճապոնական) համակարգի առանձնահատկությունները: Հյուրասիրության դերը և նշանակությունը զբոսաշրջության և հյուրանոցային տնտեսության զարգացման գործում:		
Գնահատման մեթոդները և չափանիշները		

• 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, • Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Гембель П. Маркетинг взаимоотношение потребителем. М. 2002. 2. Ханвер К. Управление и организации в сфере услуг, Питер, 2002. 3. Иленков А.П. Специфики и направления сервисном продуктами. М. 2000.

0202/B19.	Մարքեթինգը և գովազդը սերվիսի ոլորտում	5 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	40/24/0	
V կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում մարկեթինգի վերաբերյալ, ինչպես նաև հմտություններ և կարողություններ սոցիալ-մշակութային ծառայության ոլորտում, շուկայաբանության ռազմավարության կիրառության համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա մարկեթինգի էությունը և բովանդակությունը: • կհասկանա սոցիալ-մշակութային զբոսաշրջության ոլորտի մարքեթինգի կոնցեպցիան և հիմնական խնդիրները <i>Ունակ կլինի:</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • առանձնացնելու սոցիալ –մշակութային ծառայությունների շուկան ձևավորող գործոնները ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • Կկարողանա սեզմենտավորել ծառայությունների շուկան և կազմակերպել գովազդ		
Համառոտ բովանդակությունը Մարկեթինգի հասկացությունը: Մարկեթինգի սկզբունքները: Մարկեթինգի ֆունկցիաները: Մարկեթինգային հետազոտություններ:		

Սերվիսի գործունեության ձևերը: Սոցիալ-մշակութային ծառայության ոլորտի շուկան: Զբոսաշրջության շուկան: Տեղեկատվության ձեռք բերում սերվիսի շուկայից: Միջազգային տուրիզմի մարկեթինգ: Գնագոյացումը սոցիալ-մշակութային ծառայության ոլորտում: Ձեռնարկության արտաքին և ներքին միջավայր: Իրացման և ծառայությունների մատուցման առանձնահատկությունները: Մարկեթինգային ինովացիան: Զբոսաշրջության մարկեթինգի արդյունավետությունը: Մրցակցության դերը սոցիալ-մշակութային ծառայության ոլորտում:		
Գնահատման մեթոդները և չափանիշները • 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: • 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է: • 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:		
Հիմնական գրականության ցանկը 1. Гембель П., Маркетинг взаимоотношений с потребителем, М., 2002г. 2. Хансвер К., Управление и организация в сфере услуг, Питер., 2002г. 3. Челенков А.П., Специфика иправления сервисными продуктами / А.П Челенков// Маркетинг 2000. 4. Дмитриева Е.А., Фокус группы в маркетинге и социологии, М., 2006г. 5. Ядов В.А., Стратегия социологического исследования, М., 2006г. 6. Григорьев С.И., Начала современной социологии, М., 1999г. 7. Ходанов А.И., Психология успешных продаж, Питер, 2001г.		

0202/B20	Սերվիսի մենեջմենթ	5 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	48/32/0	
VI կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել տեսական գիտելիքներ մենեջմենտի համակարգի վերաբերյալ, ինչպես նաև հմտություններ և կարողություններ սերվիսի ոլորտի կառավարման բնագավառում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն		

• կիմանա մենեջմենտի էությունը և բովանդակությունը որպես սոցիալ-մշակութային ծառայության ոլորտի կառավարման համակարգ, • կտիրապետի կառավարման մեթոդներին ու սկզբունքներին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • կիրառել սոցիալ –մշակութային ծառայությունների կազմակերպման և կառավարման տեսությունները ռազմավարության և մարտավարության մշակման գործընթացներում, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • կկարողանա կիրառել աշխատանքի կազմակերպման գիտելիքները սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության ոլորտներում:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Դասընթացի նպատակը և խնդիրները: Մենեջմենտի ձևավորումը որպես գիտություն: Կառավարման տեսության հիմնական ուղղությունները: Կառավարման որոշումների ընթացակարգը: Պրոբլեմային իրավիճակների մոդելավորում: Մենեջմենտի հատկանիշները: Մենեջմենտի փիլիսոփայություն: Սոցիալ-մշակութային ծառայությունը որպես օբյեկտ: Սերվիսի կառավարման առանձնահատկությունները: Զբոսաշրջության կառավարման առանձնահատկությունները: Սոցիալական մենեջմենտի առանձնահատկությունները: Գործնական շփումների կազմակերպումը: Մենեջմենտի էթիկա: Սերվիսի մենեջմենտի հիմնական ֆունկցիաները: Կազմակերպչական մենեջմենտը զբոսաշրջության բնագավառում: Սերվիսի ինովացիա: Սերվիսի կոնտրոլինգ: Զբոսաշրջության ինժինեռինգ: Սոցիալ-մշակութային ծառայության մենեջմենտի արդյունավետության բարձրացման ուղիները:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> • 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: • 1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է: • 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:
<i>Հիմնական գրականության ցանկ</i>

1. Уткин Э.А., Бутова Т.Б., Менеджмент, М., 2002г.
2. Менеджмент социальной работы, Учебное пособие, Под ред. Е.И. Комарова, А.И. Войтенко, М., 2001г.
3. Медведева Г.П., Этика социальной работы, Учебное пособие, М., 2002г.
4. Саак А.Е., Менеджмент в социально-культурном сервисе и туризме, Учебное пособие, М., 2006г.

0202/B21	Հայկական սփյուռքի աշխարհագրություն	5 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	40/24/0	
VI կիսամյակ	Քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողներին պատկերացում տալ Հայ սփյուռքի (հայկական գաղթաշխարհի) պատմության մասին: Ուսումնասիրել արտագաղթերը, որպես հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասնիկ: Դրանց դրդապատճառները, ժամանակաշրջանները: Գաղթաշխարհի որակապես նոր տեսակի անվանման՝ «սփյուռք» (diaspora) հասկացության առաջացումը, նրա բովանդակային նշանակությունը: Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման, սփյուռքի ակտիվ մասնակցության գործընթացը ՀՀ տնտեսության զարգացման գործում:		
